

ԱՆԱՅԻՏ ՅԱՅՅԱՄԱՍԻՅԻ. Սադեղ Հեղայաթ. կյանքը և գիտագրական ժառանգությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 254 էջ*:

Բանալի բառեր՝ Իրան, Սադեղ Հեղայաթ, նովել, ավանդույթ, ազգագրություն, բանագիտություն, Խայամ, մշակույթ:

Վերջերս լույս ընծայվեց Բ. Գ. Թ. Անահիտ Յահյանասիհի ուսումնասիրությունը՝ նվիրված XX դ. պարսից մեծ արձակագիր, գիտական և հասարակական մտքի ջատագով Սադեղ Հեղայաթի կյանքին, գեղարվեստական արձակին ու ազգագրական հետազոտություններին: Աշխատությունը ներառում է չորս գլուխ, որոնցում լուսաբանվում են՝



Հեղայաթի ժամանակաշրջանն ու Իրանի սոցիալ-պատմական իրողությունները, այդ հոլովույթում կայացած նրա գրական արձակը, բանագիտության ձևավորումը XIX–XX դդ. Իրանում և Հեղայաթի դերն այդ կարևոր դիալեկտիկ զարգացման գործում: Աշխատության երկու ընդարձակ հավելվածները նվիրված են Օմար Խայամի քառյակների հեղայաթյան ընկալմանը, հայ և պարսիկ մեծ բանագետների համեմատական քննությանը, ինչպես

նաև հետազոտողի կողմից կատարված Հեղայաթի մի քանի պատմվածքի թարգմանությանը:

Կարելի է փաստել, որ հայ իրանագիտության մեջ մինչ օրս Հեղայաթն այս համատեքստում չի ներկայացվել: Ճիշտ է, մեր ընթերցողը թարգմանված գեղարվեստական արձակում զգացել է բանահյուսական մտքի ու խոսքի, ժողովրդական ֆարսիզմի ընդգծված առկայությունը, հատկապես՝ սոցիալական ցածր խավի բառապաշարում, սակայն անտեղյակ է եղել պարսից բանագիտության կազմակերպման և կայացման գործում Հեղայաթի մեծ ավանդից: Այս տեսանկյունից ուսումնասիրությունը հետաքրքրություն է ներկայացնում իրանագիտական հայայեզու հետազոտությունների ծիրում:

Հեղայաթ երևույթը ճիշտ ներկայացնելու համար անհրաժեշտ էր անդրադարձ վերջին Ղաջարյանների և Փահլավիների վարած կայսերակենտրոն քաղաքականությանը, ծանոթություն Իրանի պատմության բարդ, բայց և առաջադիմական հատվածներից մեկի՝ վեստերնիզացիայի ու լուսավորչականության շրջանին, քաղաքական վերնախավի և մտավորականության հայացքներին: Այդ է պատճառը, որ հեղինակն իր հետազոտությունը սկսում է Հեղայաթի՝ հախուռն, տպավորություններով հագեցած և դրամատիկ կենսագրական մանրամասներից: Հասկանալի է դառնում, որ նա հեռու էր լուրջ քաղաքականությունից և գեղագիտական ընկալումների վեկտորն որոշակիոր-

* Ներկայացվել է 24. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 11. VI. 2021 թ.:

րեն ուղղված էր դեպի եվրոպական չափանիշներ: Այնուհանդերձ, իր քաղաքացիական դիրքորոշմամբ և սեփական երկրի հոգևոր արժեքների գնահատմամբ՝ նա մասնակից էր Իրանի սոցիալ-քաղաքական կարևոր իրողություններին:

Աշխատության հեղինակը հատկապես վերլուծում է Հեղայաթի «Նեյ-րանգեսթան—հրաշքների աշխարհ» և «Օսանե-հեքիաթ» բանահյուսական ժողովածուները՝ ընդգծելով գրողի ներդրումն ազգային արժեք ներկայացնող ֆոլկլորային նյութի հավաքման ու համակարգման գործում: Հայ ընթերցողի համար նորույթ է հեղինակի կողմից հավաքված բանագիտական էմպիրիկ նյութը՝ պարսկերեն և հայերեն լեզուներով: Ժողովրդական հավատալիքները, սովորույթները, գուշակությունները, երգերը, ծեսերը ցույց են տալիս պարսից մեջ պահպանված բազմաթիվ երևույթներ, որոնք տիպաբանական ընդհանրություններ և երբեմն հեռավոր ազդեցության երանգներ ունեն տարածաշրջանի այլ ժողովուրդների բանահյուսական նյութի հետ:

Իր քննության արդյունքում հեղինակը բացահայտել է հայերի համար մի շատ հետաքրքիր փաստ՝ Հեղայաթի ծանոթությունը Կոմիտասի «... Գացին տեսան գեղնա կերել գէծ» կատակերգին և դրա պարսից մի տարբերակին (էջ 182–189):

Հեղինակը չի չըմանցել Հեղայաթի հատուկ անդրադարձը զրադաշտական հուշարձան «Ավեստային»: Ակնհայտ է դառնում որպես հայրենիքի ճշմարիտ նվիրյալ, ավանդույթի պահպանման ջատագով, նա ըմբռնում էր երկու անմիավորելի հավատքների՝ զրադաշտականության և իսլամի՝ նույն ժողովրդի քաղաքակրթությանը պատկանելու փաստը, Իրանի էթնոմշակութային անընդհատության ու ժառանգականության երևույթը, որը, կարծում ենք, մինչև օրս ապրում է պարսից էթնիկ գիտակցության խորքում որպես «Թամադոնն բողորգ — հզոր քաղաքակրթություն» կոնցեպտ:

Հեղայաթի նշված աշխատություններից բերված բազմաթիվ օրինակներով Ա. Յահյամասիհին ցույց է տալիս Հեղայաթի ջանքերը՝ ժամանակակից սովորույթներում վերականգնելու հին ծեսերի հետքերն ու հաստատելու արդի պարսից ազգային մտքի հավատարմությունն անցյալից եկող ավանդույթներին: Ավելին, աշխատության երկրորդ հավելվածում (էջ 198–232) հեղինակին հաջողվել է Հեղայաթի պատմվածքների՝ իր կատարած թարգմանական նմուշների միջոցով ցույց տալ ֆոլկլորային նյութի գերակայությունը՝ հերոսների խոսքում, վարքում, կենցաղային դրվագներում:

Հեղայաթի գրչին է պատկանում էսսե—ուսումնասիրություն՝ Օմար Խայամի քառյակների վերաբերյալ: Հեղինակն անդրադարձել է այդ աշխատանքին, հիշատակել Խայամի քառյակների հին ձեռագրերն ու պահպանված սուղ տեղեկությունները: Մեկ անգամ ևս ուշադրության է արժանանում Խայամի քառյակների՝ մինչ օրս չլուծված պատկանելության խնդիրը: Կարծում ենք, Հեղայաթի կողմից ոչ միայն Խայամին վերագրվող քառյակների հավաքման փորձն էր կարևոր, այլև հանճարեղ գրողի ինտուիցիայից եկող ու արևելյան միջնադարյան փիլիսոփայության լավ ճանաչողությունից բխող խայամյան քառյակների ատրիբուցիայի ճշտման փորձը: Պետք է ասել, որ Խայամին վերագրվող ոտբայիների հեղայաթյան ընտրությունը և բազ-

միցս հրատարակված այդ ժողովածուն մինչ օրս համարվում է հեղինակավորներից մեկը:

Բանահյուսական խոսքի տարածման հեղայաթյան ազգանվեր գործը մեր հեղինակին հուշել է համեմատել երկու մեծագույն բանահավաքների՝ Ս. Հեղայաթին և Գ. Սրվանձտյանցին (էջ 189): Կարելի էր նշել, որ համեմատությունը զուտ տիպաբանական է, այսինքն՝ չկան ազդեցության աղբյուրներ: Նմանությունը պատմական ժամանակի պահանջն էր, ազգանվեր անհատների գիտակցված նվիրումը, արևելյան մտածողության ու արժեհամակարգի որոշ էական ընդհանրությունները, ինչպես նաև տարբերությունները և այլն:

Կարծում ենք՝ կարելի էր կանգ առնել Հեղայաթի ծայրահեղ հակադիր մոտեցումների խնդրի վրա. ազգագրական աշխատանքներում նշել նրա կողմից ավանդույթների պահպանման ջանքերը, իսկ փոքր արձակում՝ նովելում կամ պատմվածքում՝ ավանդույթներին հակասող, եվրոպական ավանգարդի ջատագովումը: Ակնհայտ է, որ գրողը մի կողմից վերադարձնում էր ազգային սովորույթն ու մոռացվող ծեսերը, ամրապնդում ավանդույթը, իսկ մյուս՝ գեղարվեստական արձակում՝ ստեղծում հասարակ ժողովրդի կողմից դժվար ընկալվող (Քոռ բուն) գրական մոդեռնի համաշխարհային գլուխգործոցներ:

Ճիշտ կլիներ փաստարկել և հիմնավորել Հեղայաթի վերլուծվող աշխատությունների ընտրության չափանիշները:

Այսպիսով, հատկապես պարսից մասնագետների և հետազոտողների աշխատությունների լայն ընդգրկմամբ, ընթերցողի սեղանին է դրված գիտական նորույթ պարունակող գիրք, որի թանձրույթն է՝ պարսից ազգագրական, բանահյուսական նյութի հավաքման, համակարգման և որպես գիտություն ձևավորման գործում Սադեղ Հեղայաթի դերի բացահայտումն ու արժևորումը: Գծագրվում է Սադեղ Հեղայաթ-Ֆենոմենը, իր նախասիրությունների մեջ երբեմն ծայրահեղ, ճիշտ և ճիշտ իր կյանքի ու մահվան դրամատիկ ընտրության պես՝ անսպասելի:

ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՋՄՈՅԱՆ

Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գլխավոր գիտաշխատող, արևելագետ-բանասեր, իրանագետ-մեդիևիստ, թարգմանիչ: Գիտական հետաքրքրությունները՝ պարսից գրականություն, իսլամական քաղաքակրթության, համեմատական գրականագիտության, արևելյան միջնադարյան աշխարհի պատմամշակութային և աղբյուրագիտական հարցեր: Հեղինակ է 7 գրքի և 63 հոդվածի: kozmoyan@mail.ru